

ՏԱՍՆԵՐՈՐԴ. ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարեկան 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարացիք դիմում են ուղղակի
Խմբագր. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար զմարում են
խրատանկիւր րոտին 2 կոպէկ:

Մ Շ Ա Կ

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Ե ԳՐՎԵԼ

Կ Ե Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուլիսի 1-ին ներկայ 1881
թվի, մինչև յուլիսի 1-ը 1882 թվի:

Բաժանորդութեան գինը 6 րուբլ է:
Գրվելու համար պէտք է ուղղակի գրվել
խմբագրութեանը հետեւեալ հասցեով. Խմբագր.
Редакция «Менк»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի զգուշ յատկութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Մեր քաղաքային գործեր, նամակ Գործը, ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. նամակ Թիւր-
քային, Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—
ՀԵՌԱԳՐԱՆԵՐ.—ՊԵՏԱՍՍԻԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԻ ԶՈՒՆԵԼԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ

Մեր Կ. Պոլսի թղթակից, Գրիգոր Նիկո-
ղոսեան, նկարագրում է Հայ-կաթօլիկների
այն յատկութիւնը, որ նրանք իրանց հայ
չեն ճանաչում, ատելութեամբ են վերաբեր-
վում դէպի հայոց ազգութիւնը, դէպի մայ-
րենի լեզուն:

Անկասկած դա մի շատ անհերքելի յատ-
կութիւն է:

Բայց արդեօք կաթօլիկութիւնն է այս
հրէշաւոր երեւոյթի մէջ մեղաւոր, թէ ին-
քն հայի յատկութիւնը:

Մենք հաստատապէս կասեմք որ կաթօ-
լիկութիւնը, կաթօլիկ կրօնը զրա մէջ մե-
ղաւոր չէ այնքան, որքան նոյն իսկ հայի
յատկութիւնը:

Եթէ կաթօլիկութիւնը պատճառ լինէր
որ հայը դառնալով կաթօլիկ, ուրանում է
իր ազգութիւնը, սխալ է ասել իր մայ-
րենի լեզուն, ինչի՞նչ ուրեմն յոյնը, բոլորա-
յին կաթօլիկ դառնալով, այնու ամենայ-
նիւ մնում են յափշտակված հայրենասէր-
ներ և ազգասէրներ, մնում են յոյն և բո-
լորապէս կաթօլիկ յոյնը, կաթօլիկ սլավոն-
ացիներ իրանց միշտ համարում են յոյն և
սլավոնացի, խօսում են իրանց մայրենի
լեզուով, հիմնում են դպրոցներ իրանց մայ-
րենի լեզուով, գիշեր ցերեկ մտածում են
իրանց ազգութեան բարեկեցութեան, նրա
մտաւոր ու բարոյական առաջադիմութեան
մասին: Իսկ հայը հէնց որ կաթօլիկ է
դառնում.—դառնում է հայատես: Ուրեմն
մեղաւորութիւնը կաթօլիկութեան մէջ չէ,
բայց նոյն իսկ հայի յատկութեան մէջ է:

Ոչ թէ միայն կաթօլիկ յոյնը և կաթօ-
լիկ բոլորապէս մնում են ազգասէրներ,
բայց նոյն յատկութիւնը, նոյն յափշտակ-
ված սէրը դէպի իրանց ազգութիւնը և
մայրենի լեզուն պահում են մահմետական
յոյնը, մահմետական բոլորապէս, մահմե-
տական սերբիացին...

Իսկ հայը հէնց որ փոխում է իր կրօնը,
իսկոյն սկսում է ուրանալ իր ազգութիւնը:
Այդ ամենալաւ ապացոյց է որ հայի մէջ
չը կայ ազգայնութեան գաղափարի հա-
կացողութեան ամենափոքրիկ նշանն անգամ:

Հային այնչափ շատ և այնչափ յաճախ կըր-
կնել են որ ազգութիւնն ու կրօնը մի է,
որ առանց լուսաւորչական լինելու չէ կա-
թօլիկ հայ լինելը.—որ նա էլ վերջը այս բա-
նին հաւատացել է և այդ համոզմունքը,
այդ գաղափարը այն աստիճան խոր ար-
մատներ է գցել նրա ուղեղի ու սրտի մէջ,
որ այս կամ այն պատճառով կրօնը փոխե-
լով, նա հաւատացած է լինում որ կրօնա-
փոխութեան հետ փոխվում է և իր ցեղը,
իր արիւնը, նա այլ ևս հայ չէ, որովհետեւ
հայը միայն լուսաւորչական է, ուրեմն նա
հայրենի էլ չը պիտի խօսի, հային ասի,
ամաչի հայ կոչվելուց:

Ազգրեանի պէս մի հայ-կաթօլիկ արեղայ
խակապէս նոյնն է ասում: Ինչ որ ասում է
մի հայ-լուսաւորչական արեղայ հայոց ազ-
գութիւնը երեւակայական մի բան է, հայոց
ազգը կ'ը ռ ա կ ա ն ազգ է:

Եւ ահա հայը լինի նա լուսաւորչական,
բողոքական, կաթօլիկ, թէ մահմետական,—
նա միշտ նոյն է մնում: Ինչ որ ռ ա կ ա ն
ազգ, զուրկ ազգայնութեան գաղափարից,
կամ աւելի լաւ է ասել մի ազգութիւնն ու
թէ մի ազգութիւնն:

Մի՞թէ այն յատկութիւնը որ մենք նըշ-
մարում ենք հայ-կաթօլիկի մէջ, նոյնը չենք
տեսնում և հայ-լուսաւորչականի մէջ: Մի-
թէ հայ-լուսաւորչականներն մեծ մասը,
մանաւանդ լուսաւորչաւ մասը խօսում են
հայրենի, սիրում են իրանց մայրենի լեզուն,
իրանց հայ են համարում: Ոչ, նրանք էլ,
ինչպէս հայ-կաթօլիկները, միայն կրօ-
նով իրանց հայ են համարում, բայց
ազգութեամբ ոչ: Ազգութեան հիմն է
հայրենի հողը և մայրիկի լե-
զուն: Լուսաւորչական հայը ոչ թէ այն
պատճառով իրան հայ է համարում, որ
ապրում է պատմական հողի վրա, որ պատ-
կանում է հայոց պատմական ցեղին և խօ-
սում է մայրենի լեզուով,—այլ միայն այն
պատճառով որ պատկանում է լուսաւորչա-
կան եկեղեցուն: Գարանից ի՞նչ է ծագում.
որ կարելի է հայրենի հողի վրա էլ չապ-
րել, չմտնալ էլ մայրենի լեզուն,—բայց
դարձեալ հայ մնալ: Հայը միայն այն պատ-
ճառով հայ է, որ լուսաւորչական է,—այդ է
նրա խոր համոզմունքը: Ուրեմն լուսաւոր-
չականութիւնը թողնելով, նա թողնում է
և իր ազգութիւնը, որովհետեւ լուսաւոր-
չական եղած ժամանակն էլ նրա համար
ազգութիւն չը կար, այլ միայն կրօն կար,
առանց հայրենի հողի, առանց մայրենի
լեզուի:

Կաթօլիկ, բողոքական, մահմետական
հայը այն պատճառով իրան հայ չէ համա-
րում, որ լուսաւորչական եղած ժամանակն
էլ նա իրան հայ չէր համարում, այսինքն
այն մտքով հայ, ինչպէս յոյնը՝ յոյն է, բո-
լորապէս բոլորապէս:

Յոյնի համար աներեւակցելի է յոյն լի-
նել առանց Յունաստանի մասին գաղափա-
րի, առանց յունարէն լեզուի: Իսկ հայը
շատ հնարաւոր է գտնում հայ լինել, ա-
ռանց ազգութեան գաղափարի, առանց մի
խօսք անգամ հայրենի իմանալու, միայն
պատկանելով լուսաւորչական եկեղեցուն:

Նայեցէք մեր բոլոր լուսաւորված հայերի
վրա, որոնք ոչ թէ միայն չեն խօսում, չը
գիտեն հայրենի, բայց և արհամարհում,
ծաղրում, տառաւ են իրանց մայրենի լե-
զուն:

Կաթօլիկ, բողոքական և մահմետական
հայերը մեղաւոր չեն, որ իրանց հայ չեն
համարում: Նրանց սկզբնական կրօնա-
կան դաստիարակութիւնն է մեղաւոր, որ
նրանք կատարելապէս զուրկ են ազգու-
թեան գաղափարից: Նրանք կրօնափոխ լի-
նելուց յետոյ այն պատճառով իրանց հայ
չեն համարում, որ լուսաւորչական եղած
ժամանակն էլ իրանց հայ չէին համարում,
այսինքն ազգութեամբ հայ չէին համա-
րում իրանց, այլ միայն կրօնով հայ:

Մեր կրօնական դաստիարակութիւնը,
ինչպէս ամեն կրօնական դաստիարակու-
թիւն, ոչ թէ պահպանել է ազգութիւնը,
այլ սպանել, մեղքել է մեր մէջ ազգու-
թեան գաղափարը: Այդ ամենալաւ ապա-
ցոյց է որ ազգային գաղափարը կրօնից
զուրկ է և կրօնի հետ ոչինչ կապ չունի:

Ազգութեան գաղափարը նոր է վարժ-
նում մեր մէջ: Նրան, ի հարկէ, անկարող
եղան պատուաստել մեր մէջ ոչ մեր եկե-
ղեցին, ինչպէս այդ չէ կարող անել ոչ մի
եկեղեցի, ոչ էլ մեր հարուստ գրականու-
թիւնը, նոյն իսկ հինգերորդ դարի ամենա-
հանձարեղ գրողները, որոնք բոլորն էլ
հիմնված էին միմիայն կրօնական գաղափա-
րի վրա:

Այն էլ պէտք է ասել, որ ազգութեան
գաղափարը նոր գաղափար է և եւրոպա-
յում մինչև անգամ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԲԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Այս վերնագրով «Кавказ» լրագրի մէջ
տպված է հետեւեալ յօդուածը:

Բոլոր քաղաքակրթված քաղաքների մէջ
գործ են ածում խոհեմ միջոցներ. երբ
նորոգում են փողոցները, կամ որ և է նը-
պատակի համար փողոցի մէջ մի անցք կամ
փոս է փորվում, կամ որ և է աշխատանք-
ներ են կատարում, այդ բոլոր գէպերում
փորված տեղերի մօտ փայտերով ճանա-
պարհ կապում են և գիշերները այդ փայ-
տերի վրա լապտերներ են դնում: Օրէնքը
այդ պահանջում է ապահովութեան հա-
մար և այդ գործը կատարվում է ոչ թէ
միայն բաղմամբով, այլ և ամենայնաւոր-
կած փողոցներում: Բայց այդ բանը չը կայ
մեր օրհնած Թիֆլիսի մէջ, որի տնտեսա-
կան գործերը կառավարող վարչութեան
համար մօտ 60,000 րուբլ ծախս է լինում:

Մեզ մօտ ոչ թէ միայն խուլ փողոցներում
անցորդները կարող են իրանց շինքը կոտ-
րել, իսկ կառքերը ջարդվել, քանի որ փո-
ղոցներն էլ շատ վատ են լուսաւորված,
այլ և գլխաւոր փողոցների վրա ոչինչ մի-
ջոցներ չեն գործադրում հասարակական
ապահովութեան համար: Ահա թէ ինչ

ՆԱՍՏԱԿ ԳԱՐՍԻՑ

Գուլիսի 13

Հրաւեր ստանալով այստեղի երկուս զարդի
տեսից, գնացի ուսումնարանի ճանդէսը (актѣ):
Առաջին իմ ուղադրութիւնը գրաւեց ուսումնա-
րանի շէնքը, որ բաւականի մեծ, յարմար ու
մաքուր է: Աշակերտների թիւը հասնում է մին-
չև 205 (55 աշակերտուհի և 150 աշակերտ):
Ուսումնարանը ունի երկու պարտաւարական,
երկու առաջին և երկուրորդ դասարան, այժմ ու-
ղում են աւելացնել և երրորդ: Ուսուցիչներն են՝
պ. պ. բժ. Վաղաղեան (մի և նոյն ժամանակ
տեսուչ), բժ. Կապուչեան և այլ չորս ուսուցիչ:
Երկու վարժուհի: Պ. պ. Վաղաղեան և Կապու-
չեան ձրի են աշխատում, իսկ մնացածները ու-
ճիկ են ստանում:

Աշակերտներին թուանշանները բաժանուր
յետոյ խաղային վիճակաւ (лотерея) վճար
էր գցած աշակերտների ձեռագործները, որ շատ
սիրուն էին և լաւ էր յաջողվել փոխել աշխա-
տողներին: Բայց որքան տխուր ապաւորութիւն
են թողնում մարդու վրա այդ անմեղ մանուկ-
ները իրանց չքաւորութիւնով: Մինչև անգամ
մէկը գրանցից բոլորովին մերկ տուրով էր, ա-
ռանց կոշիկի, հագած ունի միայն գլխածած ախա-
լուխ: Ուսումնարանի վարչութիւնը ձրի բաժա-
նում է դրանց գիրք, թուղթ և առհասարակ
ուսման պիտոյքը, չտեսնել մինչև անգամ հագ-
նում են ուսումնարանի հաշուով: Պ. Վաղաղեան
շատ բաւական էր, թէ աշակերտուհիներին թէ
աշակերտներին, որոնք, ինչպէս ասում էր նա,
շատ ընդունակ են և աշխատասէր: Այդ երկու

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

144 Արժույթը գալերիա 144
ամենախոշոր պահեստ
մեքենայի և հայելիների.

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ
ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ
ВЪ НАЙМЫ
Въ галлерей имѣются: вода, газовое
освѣщеніе и телеграфная станція.
9—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻՄ
ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ
Գալլերիում կայ ջուր, գազի լուսավորում
Թիւն և հեռագրական կայարան:
9—10

ՎԵՐԱԳՈՒՆՆԵՐ 4 ր., ծրծրներ 1 ր.,
ճարձղ աթոռներ 1 ր. 50 Կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒ
4 ր., ԲԱԶԱԹՈՒՄ-ՄԱՀԱՍԱԼ 10 րուր և
աւելի, Թէյի բաժակներ 25 և 30 Կ., մի
աման ջրոցներ 50 Կ., պատեղա ծրծրներ
Համար 60 Կ. Փուխ, անգլիական ՎԱՆՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:
10,000 զոյգ զուլաններ 25 Կ.—ից զոյգը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԱՆՆԵՐ 30 Կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ 5 Կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱՍԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400
արշին բամբակ. 1 ր.—1 ր. 30 Կ., պա-
րուսինա 40 Կ.—1 ր., 300 հատ բէլժիկ
4 ր.—35 ր., 700 պրոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000
ֆուխ Թէյ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 Կ.: եր
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ մէջ:
24—100

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ“
продаются слѣдующія нѣмецкія брошюры:
Die Oekonomische Lage der Armenier
in der Tuerkei. von Dr. GRIGOR ARZRU-
NI. Uebersetzt von A. Amirchanjanz. Preis
25 kop.
Die Hungersnoth in Tuerkisch-Armenien
von Dr. GRIGOR ARZRUNI. Uebersetzt von
A. Amirchanjanz. Preis 20 kop.

Մինչև առաջիկայ սեպտեմբեր լոյս կը
տեսնի Փիզիկական, Ժողովրդա-
կան և քաղաքական ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒ-
ԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ հայ տղայոց և օրիոր-
դական ուսումնարանների համար: Յանկա-
ցողները կարող են զիմել ուղղակի աշխատա-
սիրողին հետևել հասցեով:
Тифлис. Армянская Духовная Се-
минарія Нерсесьянъ. Учителью А.
Теръ-Акопянъ.

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմեոն-
անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Շրէքերի
„Տնային բժշկական մարմնամարզութեան“
գրքոյի հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի:
Նա յարմարացած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախ-
վում է „Կենտրոնական և Կովկասեան գրա-
վաճառանոցներում, Նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ.“ Тройцкій пер. типо-
графія Вартанянца, въ Тифлисѣ.

ԹՈՒՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԳՐԻՒՈՐ ՎԱՐՁԵԼԵԱՆ
գինն է 70 կոպէկ
Ուսումնարանները և շատ օրինակ գնող-
ները 20% զիջում են ստանում:
Յանկացողները կարող են զիմել կամ
ուղղակի հեղինակին „Тифлисѣ, Григо-
рію Соломоновичу Вардзелянъ, Ар-
мянская Семинарія, կամ կենտրոնական
գրավաճառանոց, ուր պահեստն է այդ գրքի:
Открыта полугодовая подписка
НА
ЕЖЕНЕДЕЛЬНЫЙ ЖУРНАЛЪ
„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“
(издаваемый въ г. Тифлисѣ)
Съ 1 Іюля 1881 года по 1 Января
1882 года.
Цѣна за полъ года 6 руб.
Кромѣ того можно подписаться на
3 мѣс.—3 руб. 20 коп., на 1 мѣс.—
1 руб. 20 коп. Подписка принимается
съ 1 числа каждаго мѣсяца и не
далѣе конца года.
Разсрочка въ взносъ денегъ допускается
по соглашенію съ администраціею жур-
нала.
Подписка принимается исключитель-
но въ администраціи журнала, въ г.
Тифлисѣ, близъ Головинскаго пр.,
по Безымянному пер. въ домѣ Та-
машева.
Издатель А. С. Френкель.
Редакторъ А. В. Степановъ

„Ի Ե Ն Թ Ը“
ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՈՒՍ-ԹՈՒՐ-ԲԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՍՏՈՒՅ ՀՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՅԻԻ
Տպագրւմ մաքուր թղթի վրա, գիրքը բազ-
մանում 400 էրևելցի թիֆլիսում ծախվում է
„Մշակ“ խմբագրատանը, „Կենտրոնական
գրավաճառանոցում“, „Կովկասեան գրա-
վաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բոզար-
ջեանցի, Հովուեանցի ծխախոտի մաղաղի-
ներում:
Գինն է 1 րուր 20 կոպ.:

ԱՅՍ 1881 ԹՈՒՄԱԿԱՆԻ ՅՈՒՆԵՍԻ ՍԿԶԻՑ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԸ
Որ առաջ գտնվում էր Արժույթը գալլերիում, անցաւ Միւրի մանեանի
խանութները, Գոյովինսկի Պրոսպեկտի վրա, Սուգէրի Պալատի առկը № 3, 4
(երբեքն ջանջողներին խանութը):—Այս 1881 թուականից գրախանութին կից
բացվում են:
Ա. Մի առանձին բաժին ուսումնարանական, զիւանական, գրագիտական պիտոյքների,
ուր վաճառվում են թղթեր, թանաքներ, մատիտներ, տետրակներ, քարտաստաններ,
գրատախտաններ, փոստի ծրարներ, հայերէն և ֆրանսերէն մանրագրերով, կարկիներ,
նկարչութեան վերաբերեալ պիտոյքներ և այլն և այլն...
Բ. Թիֆլիսում արդէն յայտնի „Մանկական դաստիարակութիւն“
(Дѣтское Воспитаніе) անունով պ. Ա. Զիմեանի ֆիրման ևս անցաւ Կենտրոնական
Գրավաճառանոցի ձեռքը, ուր վաճառվում են ամենատեսակ մանկական և պարզ
խաղալիքները ամենայն հասակի մանկանց համար:
Ընդունվում են պատուէրներ նաեւ արտաքին քաղաքների ուսումնարանական
վարչութիւններից ու մասնաւոր անձիքներից: Գները համեմատաբար չափաւոր են:
Դրամաւոր պատուէրները կատարվում են անյապաղ:
Արտաքին քաղաքների օրիորդական ուսումնարանների վարչութիւնների գործը
թիւեացնելու համար Կենտրոնական Գրավաճառանոցը յանձնառու կը լինի կատարել
և այնպիսի պատուէրներ, որոնք իրան գործունէութեան շրջանից դուրս են, այն
Ձեռագործին վերաբերեալ ամենատեսակ պիտոյքներ գնել և ուղարկել, բայց մի-
այն ուսումնարանների համար, որոնք իրանից են գրքեր և այլ ուսումնարանական իրեր
գնում: Անփող պատուէրներն անկատար են մնում:
Կենտրոնական Գրավաճառանոցում ի միջի այլոց վաճառվում են հետևեալ նոր
հրատարակութիւնները:
Րաֆֆիի. Խնկթը 1 ր. 20 Կ.
— Դաւիթ Բէկ 1 ր. 50 Կ.
Յովհաննիսեան. Հայր և Հայաստանը օտարների աչքում . . . ր. 30 Կ.
Շահագիրեան. Հրապարակաբօս ձայն 2 ր. — Կ.
— Նոյն փառակազմ 3 ր. — Կ.
Այվազեան Գ. Արք. Պատմութիւն Խալիպ. ուսումնարանի. . . 2 ր. 40 Կ.
Աթանասեան. Երեւանի նահանգի բուսականութիւնը . . . ր. 50 Կ.
Բուսաբանութիւն համառօտ ր. 30 Կ.
Անփող պահանջներն անկատար են մնում:

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջին փողոցում կատարկից փողոցի անկիւնում ՄԻ-
ԿԱՅԻՆ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաբաղաբացի կարող են զիմել այս հասցեով. Թիֆլիս, Михаилу
Н. Теръ-Никогосову.
39—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ՐԱՅՅԻԻ „ԽԵՆԹԸ“ անու-
նով փրկաստանութիւնը: Նոր գնել ջանկացողներին խնդրում ենք զիմել ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաբե-Յալորեանցի տպարանը: ԲԱԳՈՒ
պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՋ պ. Գրիգոր Բէջանեանցին.
Հրատարակչի հասցէն. Մյուս, въ конторѣ Аруянца АБЪЛУ АП-
РЪСЯНЦУ.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԳԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբա-
ներ, կօնֆեկաներ, ԿԱԿԱՕ, բրինձ, Ա-
ՄԱՆԵՂԷՆ, բօկաներ, թասեր, երես լուս-
նալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (судки), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԵՐՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գդալներ,
ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակ-
ներ, ՀՐԱՅԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, ալբոմ
ներ, ՄԱՀԱՍԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիւթ, պա-
րուսին, թաշկինակներ, երեսքներ, կլեմ-
կա, գուլաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՑԵՆ, խե-
րես, կօնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակու-
թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒՐԸ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:
Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մա-
քնեղիա, խմոր ԾԱՐԱԽԻ դէմ, ԽԵՆԱՅԻ գի-
նի ջերմի դէմ, կարթուրան փօշի, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ վատերկրողե-
տի համար, պարսկական փօշի:
16—100
31—100